

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/4

7 մայիսի 2013թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Սամվել Ստեփանյանի ներկայացուցչի ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 09.04.2013թ. թիվ 2117312 ստուգման ակտի դեմ բերված բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 15.04.2013թ. թիվ 4276-13) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 26.03.2013թ. թիվ 2117312 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Սամվել Ստեփանյանի մոտ ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 11.11.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է Հրազդանի ՏՀՏ 09.04.2013թ. թիվ 2117312 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 120.000 դրամ:

Ա/Ձ Սամվել Ստեփանյանի ներկայացուցչի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 09.04.2013թ. թիվ 2117312 ստուգման ակտի դեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերվել է բողոք: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 07.05.2013թ-ի գրությամբ Ա/Ձ Սամվել Ստեփանյանի ներկայացուցիչը բերել է միջնորդություն, որով վերջինս խնդրել է, որպեսզի Հրազդանի ՏՀՏ 09.04.2013թ. թիվ 2117312 ստուգման ակտի դեմ բերված բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Սամվել Ստեփանյանի ներկայացուցչի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Սամվել Ստեփանյանի ներկայացուցչի ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 09.04.2013թ. թիվ 2117312 ստուգման ակտի դեմ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ